

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2001թ. փետրվարին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 20,4 մլրդ. դրամ, որը 2000թ. մակարդակը գերազանցել է 0,2%-ով, 2001թ. փետրվարի համախառն արտադրանքը կազմել է հունվարի 76,9%-ը (համադրելի գներով):

«2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» համաձայն, հանրապետությունում առկա անասնազխաքանակը և սեռահասակային խմբերի կազմը ճշտելու նպատակով, 2001թ. հունվարի 1-ի դրությամբ անց է կացվել անասունների համատարած հաշվառում: Համատարած հետազոտության հաջորդ փուլում ստացված արդյունքների արժանահավատության աստիճանի գնահատման նպատակով իրականացվել են ընտրանքային ստուգումներ և հետազոտություններ, ինչի հիման վրա համատարած հաշվառման արդյունքները ենթարկվել են ճշգրտման:

Անասունների գլխաքանակն ըստ մարզերի

(գլուխ)

	խոշոր եղջերավոր անասուններ		ոչից կովեր		խոզեր		Ընդամենը ոչխարներ և այծեր	
	1.01.2001թ.	1.01.2001թ. %-ով 1.01.2000թ. նկատմամբ	1.01.2001թ.	1.01.2001թ. %-ով 1.01.2000թ. նկատմամբ	1.01.2001թ.	1.01.2001թ. %-ով 1.01.2000թ. նկատմամբ	1.01.2001թ.	1.01.2001թ. %-ով 1.01.2000թ. նկատմամբ
Արագածոտն	55656	100,7	30578	99,6	3644	73,0	77130	83,9
Արարատ	37376	118,1	18513	102,0	5343	98,9	61985	132,1
Արմավիր	37367	101,2	19050	101,1	8569	112,7	41628	105,2
Գեղարքունիք	87728	104,7	45472	97,2	4635	93,9	94569	108,1
Լոռի	56269	96,5	31415	96,7	10551	94,0	36507	93,0
Կոտայք	47664	112,3	27993	107,0	4989	122,4	50968	92,5
Շիրակ	71428	100,0	37599	103,9	7141	89,1	55558	81,2
Սյունիք	42892	107,4	22771	107,2	3711	106,8	55548	106,2
Վայոց Ձոր	21315	107,3	10553	98,1	685	76,5	30243	100,1
Տավուշ	37164	101,6	19450	100,4	17401	100,1	33165	101,9
ք.Երևան	2447	96,8	1526	106,7	2243	87,8	2691	55,2
Ընդամենը ՀՀ	497306	103,9	264920	101,1	68912	97,7	539992	98,4

Վերը բերված աղյուսակից երևում է, որ 2000թ. համեմատությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել է 3,9 %-ով, այդ թվում կովերինը՝ 1,1%-ով, իսկ խոզերի և ոչխարների ու այծերի գլխաքանակը նվազել է համապատասխանաբար՝ 2,3 և 1,6 %-ով:

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում ըստ մարզերի, 2001թ. մարտի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)*, հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ
Արագածոտն	1,1	100,0	3,4	97,1	2,1	95,4
Արարատ	0,7	100,0	1,9	95,0	2,7	73,0
Արմավիր	0,7	100,0	1,9	90,5	3,3	55,9
Գեղարքունիք	1,6	106,7	4,8	96,0	2,8	71,8
Լոռի	1,2	109,1	3,4	97,1	1,5	75,0
Կոտայք	0,8	100,0	2,6	96,3	24,6	173,2

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)*, հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ	2001թ.	2001թ. %-ով 2000թ. նկատմամբ
Շիրակ	1,2	109,1	3,8	95,0	2,6	72,2
Սյունիք	0,8	100,0	2,5	96,1	1,2	70,6
Վայոց Ձոր	0,5	83,3	1,3	92,9	0,8	72,7
Տավուշ	0,8	100,0	2,1	95,4	2,0	74,1
ք.երևան	0,1	100,0	0,2	100,0	5,1	108,5
Ընդամենը ԳԳ	9,5	102,2	27,9	95,5	48,7	106,6

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2001թ. հունվար-փետրվարին իրացվել է 9,5 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը գերազանցել է 2000թ. ցուցանիշը 0,2 հազ. տոննայով կամ 2,2%-ով, ձվինը՝ 3,0 մլն. հատով կամ 6,6%-ով, իսկ կաթի արտադրությունը զիջել է 2000թ. նույն ցուցանիշը 1,3 հազ. տոննայով կամ 4,5%-ով:

*) Ներառյալ ներքին սպառումը: